ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 սեպտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

131
(2981)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԾՆՈՂՆԵՐԸ ՄԻՆՉ ՕՐՍ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՁԱՎԱԿՆԵՐԻՆ ԳՏՆԵԼ

Այսօր լրանում է 44-օրյա պատերազմի 4-րդ տարելիցը, եւ պատերազմից 4 տարի անց 88 ԴՆԹ նույնականացված, սակայն չհուղարկավորված զինվորի մարմին ու մասունք կա տարբեր դիահերձարաններում: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին պաշտոնապես հայտնեցին ՀՀ առողջապահության նախարարությունից:

Պատերազմից 4 տարի անց զոհվածների ծնողները հրաժարվում են ընդունել ԴՆԹ փորձաքննության արդյունքները: Պատճառներից հիմնականն այն է, որ ծնողները չեն վստահում պատկան մարմինների աշխատանքին՝ համարելով, որ ԴՆԹ նույնականացմամբ ստացված տվյալները հեռու են իրականությունից:

Դեռեւս 2023 թվականին անհետ կորածների հարազատների հետ պարբերաբար հանդիպումներ ունեցող Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը հրապարակային հայտնել էր. «Մենք գործ ունենք այնպիսի իրողությունների հետ, որ պատկան մարմինները մարդկանց տվել են, օրինակ, երեք ձեռք, ասել են՝երեք ձեռքն էլ ձեր որդունն է, տարեք, հուղարկավորեք: Մի ծնող 1.82 մետր՝բարձր հասակով տղա ունի, տղան 43 համարի կոշիկ է հագել, բայց, ըստ էության, ծնողին տվել են շատ ավելի փոքր՝1.60 մետր հասակով ԴՆԹ նույնականացման տվյալներ եւ ասել, որ պետք է հարմարվեք այդ իրավիճակին, Ձեր երեխան է:

Այսինքն՝ նույնականացման դաշտում տեղի են ունենում իրադարձություններ, որ ուղղակի սյուրռեալիզմի դրսեւորում են»:

Ծնողների՝ ԴՆԹ փորձաքննության արդյունքներին չվստահելու պատճառներից մեկն էլ այն է, որ զինծառայողի ֆիզիկական տվյալների եւ պետության կողմից նույնականացված մարմնի միջեւ ակնհայտ տարբերություն է գրանցվել: Բացի դրանից, եղել են դեպքեր, երբ ծնողներն իրենց ուսումնասիրություններով պարզել են, որ իրենց որդին գերեվարված է, բայց անունը գերեվարվածների ցուցակում ներառված չէ: «Ծնողներ կան, ովքեր ահռելի հետաքննական աշխատանք են կատարել, ուսումնասիրել են տարբեր կադրերով, կարելի է ասել՝ քննչականից ավելի շատ փաստեր են հավաքել իրենց որդիների գտնվելու վայրի եւ, ընդհանրապես, զոհվելու կամ չզոհվելու հանգամանքների, գերի ընկնելու հանգամանքների մասին, եւ այդ տվյալները, երբ այսպես համեմատում են եւ ամփոփում, ստացվում է, որ նրանց զավակները առնվազն չհաստատված գերիների ցանկում պիտի լինեն, բայց, փաստորեն, որեւէ կերպ այդ գերիները չեն հաստատվում», - նշել էր ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը:

Այս իրավիճակից շատ բան չի փոխվել 4 տարի անց:



ՔՊ-ում ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության համար մոտ 30 ստորագրություն է դեռ հավաքվել: Թեեւ Նիկոլ Փաշինյանին նախարարի հրաժարականի հարցով դիմելու համար անհրաժեշտ 24 ձայնը հավաքվել է, բայց, փաստացի, 71 անձից բաղկացած խմբակցությունում դեռ 30 ստորագրություն են գրեթե հավաքել երեկվա դրությամբ: Կարելի է հետեւություն անել, որ կամ ՔՊ-ում նախարարի պաշտոնանկությունը ոչ միանշանակ է ընդունվել, կամ էլ ՔՊ-ականներին հետ է պահում այն, որ այս նախաձեռնության «գլխին» Արփի Դավոյանն է կանգնած: Գրիգոր Մինասյանի հեռացման հարցը պետք է նախ քննարկվի ՔՊ խմբակցության նիստի ընթացքում, ապա ՔՊ ղեկավար Հայկ Կոնջորյանը ՔՊ-ականների ստորագրությունները պետք է ներկայացնի Նիկոլ Փաշինյանին: Ի դեպ, ՔՊ-ից մեզ ասացին նաեւ, որ քիչ ստորագրությունների պատճառ կարող են լինել պատգամավորների գործուղումները, քանի որ այս օրերին իշխանականների մեծ մասը բացակայել է երկրից, մի մասն էլ խուսափում է ստորագրել, քանի որ կարծում են՝ գուցե այնքան էլ Փաշինյանի սրտով չէ այս նախաձեռնությունը: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանն այս օրերին պաշտոնական այցով ԱՄՆ-ում է. ուստի դեռ թիմակիցներին իր հստակ որոշման մասին չի հայտնել:

Երեկ պաշտոնապես հայտնի դարձավ, որ Հայաստանին ԱՄՆ կառավարությունը 20 միլիոն դոլար է տրամադրելու, որը թեեւ մեծ գումար է թվում, բայց արժեզրկվում է Նիկոլ Փաշինյանի կառավարության ձախողումների ֆոնին: «Ժողովուրդ» օրաթերթը օրինակներով ցույց կտա, թե ՀՀ իշխանությունը նման գումարներն ինչպես է ծախսում-մսխում: ԱՄՆ Պետքարտուղար Բլինքենը եւ ԱՄՆ ՄՋԳ ղեկավար Փաուերը, անդրադարձ կատարելով Հայաստանի ժողովրդավարական առաջընթացին, հայտարարել են՝ հետագա զարգացումները խթանելու նպատակով Միացյալ Նահանգների կողմից ՀՀ-ին 20 մլն 600 հազար ԱՄՆ դոլար տրամադրելու մասին: 20 մլն 600 հազար դոլարը համարժեք է մոտ 7 մլրդ 981 մլն դրամի: Ինչ խոսք, լավ է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայաստանին այդքան մեծ օգնություն է ուղարկում, բայց խիստ կասկածելի է, թե ինչպես կօգտագործի այս գումարը իշխանությունը: Թերթենք ԱՆԻՖ-ի հաշվետվությունները: ՀՀ կառավարության որոշմամբ՝2019 թվականի մայիսին ստեղծվեց «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն (ԱՆԻՖ), որի ծրագրերի համար ՀՀ պետբյուջեից ներդրվեց 4 մլրդ 734 մլն ՀՀ դրամ՝ գրեթե 13 մլն դոլար: Այսինքն՝ պետությունը խոշոր ներդրում արեց, որը ձախողվեց, եւ 5 տարի անց պետությունն ԱՆԻՖ-ին անհատույց հատկացրեց եւս 1 միլիարդ 700 միլիոն դրամ պարտավորությունների մարման համար: Այսինքն, ԱՆԻՖ-ը, 13 մլն դոլարի ներդրմամբ բացվելուց հետո, 5 տարի գործեց անօգուտ եւ դեռ 5 միլիոն դոլար էլ հատկացվեց, որ լուծարվի: Ու հիմա, երբ համեմատում ենք 20 մլն ԱՄՆ դոլարի օգնության սպասումը եւ ԱՆԻՖ-ի համար մեր աղքատիկ բյուջեից կատարած ծախսերը, տեսնում ենք, որ դրանք գրեթե հավասար են, քանզի ԱՆԻՖ-ն «արժեցավ» 18 մլն դոլար:

Շարունակ լսում ենք հեքիաթ կոռուպցիայի դեմ պայքարի մասին, իսկ ընդհանուր հանցագործությունների թիվը ՀՀ-ում 2017 թվականի համեմատությամբ կրկնապատկվել է: Բոլոր ժամանակների հեղափոխականները փայլել են խոսքի ճարտարությամբ (Ռոբեսպիեր, Լենին, Ֆիդել Կաստրո), ըստ որի՝ հասարակությանը սկզբում կարողացել են ներարկել «նախկիններ» կողմից, դիցուք, հանցավորության եւ կոռուպցիայի դեմ պայքար չծավալելու կեղծ թեզը, իսկ հիմա տապալում են ամեն ոլորտ: Իհարկե, առաջիկայում կներկայացվի առավել դետալային վերլուծություն՝ «հանցավորության մակարդակը ՀՀ-ում *մինչ* եւ *հետհեղափոխական* ժամանակաշրջանում»: Այժմ «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի տվյալ (եւ փաստաթուղթ) է ներկայացնում. 2017 թվականին ՀՀ-ում կատարվել է 20 հազար 285 հանցագործություն: 2023 թվականին այն կրկնապատկվել է, ինչը աննախադեպ է պետությունների իրավական վիճակագրության մեջ՝ 40 հազար 666 դեպք: Իսկ մինչհեղափոխական շրջանում՝ 2017 թվականին, ՀՀ իրավապահ համակարգում քննվել է միայն կոռուպցիոն բնույթի 500 գործ (քրեական հետապնդման ենթարկված պաշտոնատար անձանց ցանկը, ըստ ոլորտների, ներկայացվում է ArmLur.am կայքի սույն լուրի մեջ 26.09.2024 ամսաթվով):



ԶՐՈՒՅՑ

«ԵԹԵ ԻՆՁ ՆՎԵՐ ՏԱՆ, ԵՍ ԷԼ ԿՎԵՐՑՆԵՄ».

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 79-րդ նստաշրջանի շրջանակում սեպտեմբերի 25-ին տեղի էր ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումը:

Էրդողանը հանդիպման ընթացքում Փաշինյանին նվիրել է իր գրած «Ավելի արդար աշխարհ հնարավոր է» գիրքը, ավելի վաղ նաեւ համացանցում լուսանկարներ տարածվեցին, որտեղ Նիկոլ Փաշինյանը, Էրդողանի գիրքը կրծքին սեղմած, լայն ժպտում է:

Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց է ուղղել ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանին:

-Պարոն Մելքոնյան, համացանցում մեծ աղմուկ բարձրացրեց Նիկոլ Փաշինյանի՝ Էրդողանի գիրքը կրծքին սեղմած լուսանկարը, հանրության մեծ մասը խիստ բացասական վերաբերեց դրան: Ինչ տեսակետ ունեք Դուք:

-Քաղաքականություն է, երկրի ղեկավարը ոնց ճիշտ է գտնում տվյալ պահին, այդպես էլ պետք է անի:

-Ճի՞շտ էր բայց մեր թշնամի երկրի ղեկավարի կողմից նվեր ընդունելը:

-Դա դեռ պարզ չէ՝ ով է մեր թշնամին:

-Այսինքն, Թուրքիային թշնամի չե՞ք համարում:

-Ասում եմ՝ պարզ չէ, ով է մեր բարեկամը ով է թշնամին. այս ամենը վերջանա՝ կերեւա, թե ով է թշնամի, ով է բարեկամ:

-Եթե Դուք լինեիք Փաշինյանի փոխարեն, կընդունեի՞ք Էրդողանի նվերը:

-Այնպիսի հարցեր եք տալիս.... Ես ինձ չեմ տեսնում երկրի վարչապետ, որ մի հատ էլ նման բան մտածեմ:

-Դե, պատկերացնենք, որ, որպես պատգամավոր, այլ երկրում հանդիպման եք, Թուրքիայի նախագահը եւս այնտեղ է եւ Ձեզ գիրք է նվիրում: Կընդունե՞ք այն:

-Եթե ես պատգամավոր եմ, գնում եմ մի երկիր, նախ ես եմ նվեր տանում, հետո, եթե ինձ նվեր տան, ես այդ նվերը կվերցնեմ:

Եթե տալիս եմ նվեր, փոխարենը ես էլ եմ ստանում:

Անդրադառնալով Փաշինյան-Էրդողան հանդիպմանը՝ թուրքագետ Վարուժան Գեղամյանը նշել էր. «1920 թ. թուրքական պետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքը գրում էր, որ «Կովկասյան պատը պետք է վերացնել», այլապես Թուրքիան պաշտպանվելու հնարավորություն չի ունենա եւ չի կարող զարգանալ:

«Կովկասյան պատ» ասելով՝նա նկատի ուներ Հայաստանը, որը ոչ միայն խոչընդոտ էր դեպի Արեւելք ծավալման համար, այլեւ անվտանգության սպառնալիք էր Թուրքիայի արեւելյան ճակատում:

Աթաթուրքն ու իր զինակիցները չհասան լիարժեք հաջողության: Սակայն այդ ժամանակ առկա քաղաքական նպատակները որեւէ տեղ չանհետացան՝ սպասելով գործարկվելու հարմար առիթի:

Տարիներ անց առիթը եղավ:

2024 թ. սեպտեմբերին «Կովկասյան պատի» բանալիները այդ պատի անվտանգության պատասխանատուները փաթեթավորված ու ժպիտով հանձնում են Թուրքիային, որպեսզի վերջինս կարողանա ծավալվել թե՛ դեպի Արեւելք, թե՛ ընդհանրապես դառնա գերակա ուժ տարածաշրջանում:

Վերջին ցանկության մասին է գրում նաեւ Թուրքիայի նախագահ Էրդողանը, որը նույնիսկ խոսուն վերնագրով գիրք է հրատարակել՝ «Ավելի արդար աշխարհ հնարավոր է»: Թուրքիայի՝տարածաշրջանում ու աշխարհում գերակայություն հաստատելու մանիֆեստ հանդիսացող այդ գիրքը արդեն մի քանի օր է Հայաստանի դեֆակտո կառավարության սեղանին է:

Իսկ տեղը, որում «հանձնվում էին» բանալիները, կոչվում է «Թուրքական տուն» (Turkevi) եւ ծառայում է որպես Թուրքիայի արեւմտյան քարոզչության (այդ թվում՝ հակահայկական քարոզչության) գլխավոր շտաբներից մեկը: Հենց այդ տեղից են աշխատում թուրքերը հայկական համայնքների դեմ, Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, Արցախի հարցի դեմ, մեր դեմ»:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԽՈՍՏՈՒՄՆ ՈՒ ՍՈՒՏԸ. ՄԱՍ 222

«ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՂԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է».

2018 թվականի օգոստոսի 17-ին Հանրապետության հրապարակում հանրահավաքի ժամանակ ունեցած ելույթի ընթացքում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Նա, ով փորձում է ինձ վրա որեւէ կասկած գցել, էլի եմ ասում՝ նրանք չեն հասկանում, որ Ղարաբաղի հարցի լուծող-չլուծողը կառավարությունը չէ:

Ղարաբաղի հարցի լուծողը ժողովուրդն է, եւ ես ուզում եմ ասել հետեւյալը. եթե բանակցային գործընթացի արդյունքում կլինի կարգավորման մի տարբերակ, որին ինքս կհատավամ եւ կհամարեմ, որ դա լավ տարբերակ է, որեւէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որեւէ թուղթ կստորագրեմ կամ որեւէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ եւ կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կներկայացնեմ ձեզ, եւ դուք կորոշեք՝ մենք գնո՞ւմ ենք այդ տարբերակով կարգավորման, թե՞ չենք գնում: Կորոշեք, որ գնում ենք, ուրեմն կգնանք, կորոշեք, որ չենք գնում, ուրեմն չենք գնա»:

Սակայն իրականում Նիկոլ Փաշինյանը 2020 թվականի նոյեմբերի 9-ին ժողովրդից թաքուն, առանց խորհրդակցելու, առանց Հանրապետության հրապարակում հանրահավաք հրավիրելու, ստորագրեց փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, որով Ադրբեջանին էր անցնում Արցախի ավելի քան 75 տոկոսը:

2022թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում տեղի ունեցավ քառակողմ հանդիպում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի միջեւ: Հանդիպման ընթացքում Նիկոլ Փաշինյանը համաձայնություն է տվել փաստաթղթի, որով Արցախը ճանաչում է Ադրբեջանի մաս: Այս փաստաթղթին հավանություն տալուց առաջ՝ Նիկոլ Փաշինյանը չի քննարկել հանրության հետ, չի լսել հանրության կարծիքը, Հանրապետության հրապարակում չի հավաքել ժողովրդին, ինչպես խոստանում էր: Այդ համաձայնության մասին հանրությունը իմացել է մամուլի արտահոսքերից. պաշտոնական հայտարարություն չի արվել:

2023թ. հոկտեմբերի 5-ին Գրանադայում տեղի ունեցավ քառակողմ հանդիպում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի մասնակցությամբ: Հանդիպման արդյունքում ընդունվեց հայտարարություն, որով Նիկոլ Փաշինյանը համաձայնություն է տալիս Արցախի՝ Ադրբեջանի կազմում հայտնվելուն:

Այս փաստաթուղթը եւս ընդունվել է՝ առանց ժողովրդի իմացության եւ գործընթացին՝ մասնակցության:

Կարճ ասած՝ Նիկոլ Փաշինյանը խաբել է ժողովրդին:

ԱԴՐԲԵՋԱՆԸ «ՀԱՅԱՄԵՏ ՄՈՏԵՑՈՒՄ» Է ՀԱՄԱՐԵԼ

Ադրբեջանի ԱԳՆ խոսնակն արձագանքել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հայտարարությանը, որ Փարիզը ուս-ուսի կանգնած է Հայաստանի վարչապետի կողքին, որը գտնվում է Ադրբեջանի եւ նրա տարածքային նկրտումների ճնշման տակ:

Այխան Հաջիզադեի խոսքով՝ դա «կողմնակալ հայամետ մոտեցում է»:

Ադրբեջանի ԱԳՆ ներկայացուցիչը հավելել է, որ Բաքուն Ֆրանսիայից պահանջում է դադարեցնել իբր «ապակառուցողական գործունեությունը» Հարավային Կովկասում:

ԿՈԲԱԽԻՁԵՆ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վրաստանը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների խաղաղ կարգավորման գործընթացը եւ երկու երկրներին առաջարկում տարածաշրջանային համագործակցության ձեւաչափ՝ հարաբերությունները կարգավորելու համար:

Այս մասին հայտարարել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանում ունեցած ելույթի ժամանակ:

«Ընդունելով խաղաղության կարեւորությունը՝ մենք առաջատար դեր ենք խաղացել Հարավային Կովկասի տարածաշրջանը հակամարտության տարածաշրջանից հնարավորությունների տարածաշրջանի վերածելու ջանքերում:

ԷՐԴՈՂԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԲԱՅԴԵՆԻ ԸՆԹՐԻՔԻՆ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը վերադառնում է «Միացյալ ազգերի կազմակերպության» (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանից: Նշվում է, որ Թուրքիայի նախագահը հրաժարվել է մասնակցել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի անունից մատուցված ընթրիքին:

Չմասնակցելու պատճառի մասին Անկարան դեռեւս պաշտոնական հայտարարություն չի արել, թեեւ թուրքական լրատվամիջոցները նշում են, որ դա հնարավոր է կապված լինի Իսրայելին ցուցաբերվող ԱՄՆ-ի աջակցության հետ:

«Էրդողանը ՄԱԿ-ի ելույթներում ընդգծել էր Բայդենի վարչակազմի կողմից Իսրայելին տրվող աջակցության մասին եւ ընթրիքին չմասնակցելը միգուցե հենց դրա պատասխանն է», - գրում է աղբյուրը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՍՐԱՅԵԼ-ԼԻԲԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՄԱՍԻՆ

Միացյալ Նահանգները, Ֆրանսիան եւ մի շարք դաշնակիցներ կոչ են արել անհապաղ 21-օրյա հրադադար հաստատել Իսրայել-Լիբանան սահմանին՝ միաժամանակ աջակցություն հայտնելով Գազայում կրակի դադարեցմանը:

«Իրավիճակը Լիբանանի եւ Իսրայելի միջեւ 2023 թվականի հոկտեմբերի 8-ից ի վեր անտանելի է եւ ներկայացնում է ավելի լայն տարածաշրջանային էսկալացիայի վտանգ, ինչն անընդունելի է: Սա ոչ ոքի շահերից չի բխում՝ ո՛չ Իսրայելի, ո՛չ էլ Լիբանանի ժողովրդի: Ժամանակն է հասնել դիվանագիտական կարգավորման, որը թույլ կտա սահմանի երկու կողմի խաղաղ բնակիչներին՝ ապահով վերադառնալ իրենց տներ»,- ասված է հայտարարության մեջ:

Լիբանանի վարչապետ Նաջիբ Միքաթին հույս է հայտնել, որ հրադադարը շուտ կհաստատվի, սակայն նաեւ հայտարարել է, որ դրա իրականացման համար կարեւոր գործոն է, թե որքանով է Իսրայելը հավատարիմ միջազգային իրավունքին:

ԶԵԼԵՆՍԿԻԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ՝ «ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼ»

Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկիի դիրքորոշումը «Ռուսաստանին խաղաղություն պարտադրելու» վերաբերյալ սխալ է եւ հետեւանքներ կունենա Ուկրաինայի համար: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Իմ տեսանկյունից՝ նման դիրքորոշումը ճակատագրական սխալ է: Ճակատագրական սխալ, համակարգային սխալ, սա խորագույն մոլորություն է, որն, իհարկե, անխուսափելիորեն հետեւանքներ կունենա Կիեւի վարչակարգի համար», - Պեսկովի խոսքերն է մեջբերում «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը:

Զելենսկին, սեպտեմբերի 24-ին ելույթ ունենալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում, դեմ է արտահայտվել Ուկրաինայում հակամարտությունը լուծելու համար Ռուսաստանի հետ բանակցություններին: Բացի այդ, նա կրկին հանդես է եկել իրավիճակի կարգավորման համար իր «խաղաղության բանաձեւն» օգտագործելու օգտին:

Սեպտեմբերի 24-ին Զելենսկին ABC News հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտնել է, որ նրա «հաղթանակի ծրագիրը» կապ չունի Ռուսաստանի հետ բանակցությունների հետ, այլ ուղղված է Ուկրաինայի զինված ուժերի հզորացմանը: Նրա խոսքով՝ այս նախաձեռնության նպատակը հակամարտությանն արագ վերջ տալն է, այլ ոչ թե մի քանի տարի ձգձգելը:

Դմիտրի Պեսկովը, մեկնաբանելով Զելենսկիի հայտարարություններն իր «հաղթանակի ծրագրի» վերաբերյալ, նշել է, որ Մոսկվան գիտակցում է Կիեւի ռեժիմի էությունը, շարունակում է «հատուկ գործողությունը» եւ հասնելու է իր առջեւ դրված բոլոր նպատակներին:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ՝ ԱՄՆ-ԻՑ

20 ՄԼՆ 600 ՀԱՋ. ԴՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Պետքարտուղար Բլինքենը եւ ԱՄՆ ՄԶԳ ղեկավար Փաուերը, անդրադառնալով Հայաստանի ժողովրդավարական առաջընթացին, հայտարարել են հետագա զարգացումները խթանելու նպատակով Միացյալ Նահանգների կողմից 20 միլիոն 600 հազար դոլար տրամադրելու մասին:

Հայտնում են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունից:

«Նոր ֆինանսական հանձնառությունները, որոնց մասին հայտարարվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընթացքում, կուղղվեն կառավարության բարեփոխումներին եւ կնպաստեն հանրային ծառայությունների բարելավմանը՝ ԱՄՆ ՄԶԳ-ի «Ժողովրդավարությունն արդյունավետ է» նախաձեռնության շրջանակում:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակում տեղի ունեցած ԱՄՆ ՄԶԳ-ի «Ժողովրդավարությունն արդյունավետ է» խորագրով միջոցառմանը՝ Կոնգրեսի հետ աշխատանքներն ամփոփելով՝ ԱՄՆ ՄԶԳ-ը եւ Պետքարտուղարությունը հայտարարեցին կիբերանվտանգության, սահմանային անվտանգության եւ էներգետիկ անվտանգության մեծացման եւ բարդ սպառնալիքների ու մարտահրավերների նկատմամբ դիմակայունության ամրապնդման հարցերում Հայաստանին աջակցելու նպատակով 20 միլիոն ԱՄՆ դոլար տրամադրելու մասին:

Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ-ն հայտարարել է նաեւ 600.000 ԱՄՆ դոլարի ֆինանսավորման մասին, որը «Տեղեկատվական բարեվարքության եւ դիմակայունության բարելավման նախաձեռնության» (ProInfo) շրջանակում կուղղվի ազդեցիկ ու հանրային հետաքրքրություններից բխող լրագրություն ապահովելու նպատակով անկախ լրատվամիջոցների տեխնոլոգիական արդիականացմանը, մեդիա եւ տեղեկատվական գրագիտության հարցերում նորարարությունների խթանմանը եւ Հայաստանում մեդիա ոլորտի առանցքային բարեփոխումների ջատագովման աշխատանքներին:

Հայաստանի համար նախատեսված նոր 20.600.000 ԱՄՆ դոլար աջակցությունը ապահովվում է ի լրումն մոտ 11,9 միլիոն ԱՄՆ դոլարի, որի մասին հայտարարվել էր ԱՄՆ ՄԶԳ ղեկավար Փաուերի այս տարվա հուլիսին Հայաստան կատարած այցի ընթացքում: Ֆինանսավորումը միտված է տնտեսական դիմակայունության ամրապնդմանը, թվային լուծումների խթանմանը եւ աղետների արձագանքման պատրաստականության մեծացմանը:

Ժողովրդավարական զարգացումների ճանապարհին գտնվող այլ երկրների ղեկավարների ու բարձրաստիճան պաշտոնյաների հետ միասին միջոցառմանը ներկա՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց երկրի ժողովրդավարական առաջընթացը՝ ողջունելով նոր ներդրումներն ու համագործակցությունը ժողովրդավարական դիմակայունության մեծացման ուղղությամբ:

Պետքարտուղար Բլինքենը եւ ԱՄՆ ՄԶԳ ղեկավար Փաուերը դեռեւս 2022թ. մեկնարկեցին «Ժողովրդավարությունն արդյունավետ է» նախաձեռնությունը՝ նպատակ ունենալով ձեւավորել շահագրգիռ կողմերի ու գործընկերների միասնական հարթակ, որի միջոցով ռեսուրսներ կապահովվեն ժողովրդավարական վերելքի ճանապարհին գտնվող երկրներին՝ օգնելու երկրի քաղաքացիների համար շոշափելի ու տեւական արդյունքների ապահովման հարցում: Այս ռեսուրսները միտված են աջակցել կառավարության բարեփոխումներին եւ հանրային ծառայությունների բարելավմանը՝ առաջնահերթ դիտարկելով քաղաքացիների կարիքներին արձագանքելու հարցերը եւ թափանցիկության ու հաշվետվողականության մեծացումը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ «ՏԵՂՅԱԿ ՉԵՆ»

Չնայած ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը հայտարարեց, որ արդեն երկու օր է ստորագրահավաք են իրականացնում արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին հեռացնելու համար՝ բայց պարզվում է՝ ՔՊ-ական պատգամավորների մեծ մասը տեղյակ չէ, որ իրենց խմբակցությունում ստորագրահավաք է անցկացվում, կամ էլ, հավանաբար, անցանկալի հարցերից են խուսափում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Էմմա Պալյանից հետաքրքրվեցինք՝ միացե՞լ է նախարար Մինասյանի դեմ ստորագրահավաքին, ինչպե՞ս է վերաբերում դրան. Էմմա Պալյանը, սակայն, մեր հարցերին ի պատասխան, ասաց, թե տեղյակ չէ, քանի որ խմբակցությունից պաշտոնապես նման բան չեն հայտարարել, իսկ երբ ասացինք, որ իրենց թիմակից Հովիկ Աղազարյանը երեկ լրատվամիջոցներին պաշտոնապես հայտարարել է, Էմմա Պալյանը շարունակեց պնդել, որ ինքը տեղյակ չէ:

«Ես չեմ տեսել մամուլում որեւէ պաշտոնական հայտարարություն, պաշտոնական կլինի այն դեպքում, երբ խմբակցությունը պաշտոնապես հանդես կգա հայտարարությամբ», - ասաց նա:

Մեր հարցերին նման պատասխան տվեց նաեւ Կարեն Սարուխանյանը. «NO comment իմ մասով, այդ մասով չեմ ուզում ոչինչ ասել, Հովիկ Աղազարյանից հարցրեք»:

Երբ հետաքրքրվեցինք՝ ինչպես է վերաբերում Գրիգոր Մինասյանի դեմ այս նախաձեռնությանը, կամ ինչու հենց այս փուլում հիշեցին նրա պաշտոնանկության մասին, Կարեն Սարուխանյանը կրկին ասաց՝ «Ես տեղյակ չեմ»:

Էդգար Հակոբյանը եւ Հակոբ Ասլանյանը պատճառաբանեցին, որ քաղաքում չեն եղել այս ընթացքում:

ՔՊ-ական Գագիկ Մելքոնյանը եւս տեղյակ չէր ստորագրահավաքի մասին, երբ հետաքրքրվեցինք՝ ինչ կարծիք ունի Գր. Մինասյանի աշխատանքի վերաբերյալ, կո՞ղմ է, որ հեռացնեն նրան, Մելքոնյանը նման պատասխան տվեց՝ դա չեմ կարող ասել:

Ստացվում է՝ ՔՊ-ում արդեն երեք օր է ստորագրահավաք են իրականացնում, որ արդարադատության նախարարին հեռացնեն, բայց պատգամավորներն անտեղյակ են ձեւանում:

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ ԵՐԵՎԱՆԸ ԲԱՔՎԻՆ

Մինչ Ադրբեջանի նախագահը շարունակում է մեղադրել Երեւանին խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններում ժամանակ ձգելու մեջ եւ նոր նախապայմաններ է դնում Հայաստանի առջեւ՝ Նիկոլ Փաշինյանը տարբեր բարձր ամբիոններից առիթը բաց չի թողնում հայտարարելու՝ Հայաստանը պատրաստ է խաղաղության պայմանագիր ստորագրել Ադրբեջանի հետ:

Փաշինյանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում կազմակերպված «Առաջնորդություն հանուն խաղաղության. ՄԱԿ-ի կանոնադրության շուրջ համախմբված, անվտանգ ապագայի որոնումներով» խորագրով քննարկման ժամանակ հայտարարել է՝ Երեւանը Բաքվին առաջարկել է խաղաղության պայմանագրի արդեն համաձայնեցված հոդվածները ստորագրել մինչեւ նոյեմբերի 29-ը:

Նա նաեւ հավելել է, որ Հայաստանի կառավարությունը հանձնառու է տարածաշրջանում հակամարտության էջը փակելուն եւ ներկա դինամիկան փոխակերպելու համագործակցության:

ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը եւս Նյու Յորքում Իտալիայի փոխվարչապետ, ԱԳ նախարար Անտոնիո Տայանիի հետ հանդիպմանը հայտարարել է, որ Հայաստանն ունի հստակ քաղաքական կամք՝ սեղմ ժամկետում Ադրբեջանի հետ ստորագրելու խաղաղության պայմանագիր, ինչին եւ ուղղված է եղել պայմանագրի նախագծի վերաբերյալ ՀՀ-ի կողմից ներկայացված վերջին առաջարկը:

Չնայած հայկական կողմի՝ խաղաղության պայմանագիր ստորագրելու այս շտապողականությանը՝ Ադրբեջանը պահանջում է Հայաստանից փոխել Սահմանադրությունը՝ հակառակ պարագայում Բաքուն սպառնում է խաղաղության պայմանագիր չստորագրել: Բաքուն խնդրահարույց է համարում Հայաստանի մայր օրենքում հիշատակված Անկախության հռչակագիրը, որում հղում կա Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միավորմանը, իսկ Երեւանն էլ Սահմանադրությունը փոխելու Բաքվի պահանջը Հայաստանի ներքին գործերին միջամտելու փորձ է որակում:

Նյութերը՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆՔԸ ՏՎԵԼ Է ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՆԵՐՔՈ

Արցախի հայաթափումից հետո Ստեփանակերտում որպես «պարետ» մնացած Սարգիս Գալստյանը հրաժարվել է ինքնախոստովանական ցուցմունքից, որոնք, Սարգիս Գալստյանի փաստաբան Ալեքսանդր Կոչուբաեւի փոխանցմամբ՝ տրվել են հարկադրանքների ներքո:

Հիշեցնենք, որ Սարգիս Գալստյանն Արցախի հայաթափումից հետո կնոջ հետ մնացել էր Ստեփանակերտում՝ իբրեւ որպես «պարետ», թեեւ Արցախում ընդամենը մի քանի տասնյակ հայ էր մնացել, որոնք եւս ԿԽՄԿ-ի միջոցով տեղափոխվում էին Երեւան: Գալստյանի կինն ինստագրամյան իր էջում պարբերաբար տեսանյութեր էր հրապարակվում՝ Արցախի դատարկ փողոցներից: Մարտի 29-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել Սարգիս Գալստյանը եւ նրա կինը՝ սեփական ցանկությամբ:

ՀՀ սահմանը հատելուց հետո՝ վերջիններս ձերբակալվել են, սակայն ավելի ուշ Գալստյանի կինն ազատ է արձակվել, իսկ Սարգիս Գալստյանին, մարտի 30-ին նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում, ներկայացվել է մեղադրանք լրտեսության համար: Սարգիս Գալստյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Սարգիս Գալստյանից բացի այս գործով այլ մեղադրյալներ չկան: Քրեական գործով նախաքննությունն ավարտվել է, գործը գտնվում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գարիկ Աբելյանի վարույթում:

Ալեքսանդր Կոչուբաեւը, սակայն, նշում է՝ գործի ընդդատությունն է սխալ, բայց դա դատարանի սխալը չէ: Խնդիրն այն է, որ ենթադրյալ դեպքը տեղի է ունեցել Արցախի Հանրապետության տարածքում, ուղղված է եղել Արցախի Հանրապետության ինքնիշխանության, տնտեսական եւ ազգային անվտանգության դեմ, սակայն, ըստ փաստաբանի, ենթադրյալ հանցանքների կատարման պահին ՀՀ ԶՈՒ-երը վերահսկողություն չեն ունեցել Արցախի Հանրապետության տարածքի նկատմամբ, իսկ չճանաչված պետությունների վերաբերյալ ԵԴ չափանիշը հստակ է՝ եթե չճանաչված պետության տարածքում հանցանք է լինում, ապա տարածվում է այն պետության իրավազորությունը, որն ունի արդյունավետ վերահսկողություն, այսինքն՝ քաղաքական, զինվորական եւ տնտեսական հսկողություն՝ չճանաչված պետության նկատմամբ: Այլ խոսքով՝ պաշտպանը գտնում է, որ ՀՀ դատարանները չեն կարող քննել այս գործը; Բացի այդ, փաստաբանը, անդրադառնալով բուն մեղադրանքին, նշում է, որ ըստ մեղադրանքի՝ Սարգիս Գալստյանը կապ է հաստատել Ադրբեջանի միլի մեջլիսի պատգամավոր Թուրան Գանջարիի ու նրա օգնական Սամիռի հետ, ինչը չի բավարարում հատուկ ծառայության աշխատակցի չափանիշներին, այսինքն՝ նրանք հատուկ ծառայության աշխատակից չեն հանդիսանում: Ըստ փաստաբանի՝ որեւէ ապացույց չկա նաեւ, թե ինչ տվյալ է ենթադրաբար փոխանցել Սարգիս Գալստյանը՝ Ադրբեջանին, առհասարակ որեւէ փաստաթուղթ, առավել եւս՝ պետական գաղտնիք պարունակող որեւէ տվյալ չի փոխանցվել:

«Քննիչը Հանրային ՀԸ եթերում ասում է, թե Սարգիս Գալստյանը կատարել է լրտեսություն կամ պետական դավաճանություն, նույնն է, որ ասես՝ անձը կատարել է սպանություն կամ կողոպուտ, սրանք փոխբացառող մեղադրանքներ են եւ վկայում է այն մասին, որ անգամ քննիչը չգիտի, թե ինչում պետք է մեղադրել Գալստյանին: Այս պահին մեղադրվում է լրտեսության մեջ: Պետական դավաճանության եւ լրտեսության մեջ օրգանական կապ կա, գործողությունը նույնն է, բայց կա նուրբ սահմանագիծ՝ քաղաքացիությունը՝ լրտեսությունը կարող է կատարել օտարերկրյա քաղաքացին կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձը, իսկ պետական դավաճանությունը՝ ՀՀ քաղաքացիություն ունեցող անձը: Սարգիս Գալստյանը, ինչպես մեզնից յուրաքանչյուրը, ունի կապույտ ՀՀ քաղաքացու անձնագիր, բայց քանի որ Արցախը հանձնել են, քաղաքական որոշում է կայացվել, թե իբր այդ անձնագրերն անիմաստ են, կոդը այլ է, ինչն անտրամաբանական է: Սխալ կոդով է՝ թող չտային; Քանի դեռ ՀՀ քաղաքացու անձնագիրը գտնվում է Գալստյանի մոտ, պետք է ընդունենք ի գիտություն, որ նա Հայաստանի Հանրապետության քաղաքացի է»,- «Փաստինֆո»-ին ասաց Կոչուբաեւը:

Ք.Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթը ստանում է տվյալներ՝ ըստ ծանրության գրանցված հանցագործությունների քանակի մասին, որոնք գրանցվել են ՀՀ մարզերում եւ Երեւան քաղաքում 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին:

ՀՀ-ում հաշվետու տարվա ընթացքում արձանագրվել է 21 հազար 241 դեպք: Հանցագործությունների դեպքերը Երեւանում կազմել են 9 հազար 436:

Մարզերից հանցագործությունների թվով առաջինը Արմավիրի մարզն է՝ 2 հազար 043 դեպքով:

Երկրորդ տեղում Կոտայքի մարզն է՝ 1 հազար 725 դեպքով:

Երրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 1 հազար 533 դեպքով:

Չորրորդ տեղում Լոռու մարզն է՝ 1 հազար 482 դեպքով:

Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հանցագործությունների քանակական տվյալները, ապա կտեսնենք, որ հանցագործությունների թվերը գրեթե 1061 դեպքով կրճատվել են:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ՝ «ՉԱՂ ՌՈՒՍՏԱՄԻ» ՄԱՍՈՎ

Քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանին՝ «Ֆազին» սպանելու գործով կալանավորված քրեական հեղինակություն Չաղ Ռուստամի՝ Ռուստամ Ստեփանյանի մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել: Մասնավորապես՝ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատարանը մերժել է նրա պաշտպանի բողոքը խափանման միջոցը փոխելու մասով, եւ նա կշարունակի մնալ ԱԱԾ մեկուսարանում կալանքի տակ:

Հիշեցնենք, որ 2024 թվականի հունիսի 11-ին կրակոցներ էին հնչել Աջափնյակ վարչական շրջանում, եւ սպանվել էր քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազ»-ը:

«Ժողովուրդ» օրաթերթը դեպքից անմիջապես հետո գրեց՝ կասկածներ կան, որ Սերգեյ Գրիգորյանի սպանությունը կապ ունի քրեական հեղինակություն Ռուստամ Ստեփանյանի՝ «Չաղ Ռուստամի» հետ, քանի որ վերջիններս շատ լարված հարաբերություններ են ունեցել. ու երկու ամիս անց կասկածները փարատվեցին:

Իրավապահները սպանությունից 2 ամիս անց ձերբակալեցին եւ կալանքի տարան Ռուստամ Ստեփանյանին ու եւս մեկ անձի, իսկ ահա սպանություն կատարողներին դեռ փնտրում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԵԼ Է ԴԱՆԱԿՈՎ ՍՊԱՌՆԱԼՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ սեպտեմբերի 24-ին Ջրաշեն բնակավայրում հողամասի շուրջ տարաձայնություններ են սկսվել հարեւանների միջեւ, որից հետո հողամասի պատկանելության հարցի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ հարվածել են միմյանց:

Դրանից հետո Հ.Հ.-ն գրպանից հանել է դանակը, հարձակվել է հարեւանի վրա, դրել կոկորդին եւ տվել է սպանության սպառնալիք:

ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Փարաքար համայնքի նախկին ղեկավար Դավիթ Մինասյանն ազատ է արձակվել: Այս մասին հայտնել է նրա փաստաբան Գեղամ Հակոբյանը:

Դատարանը Մինասյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց է ընտրել. կիրառվել է գրավ՝ 5 միլիոն դրամի չափով, բացակայելու արգելք եւ վարչական հսկողություն:

Հիշեցնենք՝ Փարաքար համայնքի նախկին ղեկավար Դավիթ Մինասյանը պաշտոնից հեռանալուց մեկ ամիս անց կալանավորվել էր: Նույն քրեական գործով մեղադրանք է առաջադրվել նաեւ Մերձավան բնակավայրի վարչական ղեկավար Միհեր Ախտոյանին եւ իրավաբանական բաժնի առաջատար մասնագետներից մեկին:

Ըստ Քննչական կոմիտեի՝ նրանք չարաշահել են ծառայողական լիազորությունները:

ՄԵՂԱԴՐՈՂ ԴԱՏԱԽԱԶԸ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ Է ՍՏԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է հրապարակել, թե որ աղմկահարույց գործերով դատախազներն են արժանացել շնորհակալագրի կամ պարգեւի:

ՀՀ նախկին ոստիկանապետ Լեւոն Երանոսյանի քրեական գործով մեղադրող դատախազ Արմեն Շահբազյանին շնորհակալագիր է հանձնվել: Գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը շնորհավորել է դատախազության աշխատակիցներին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 33-րդ տարեդարձի կապակցությամբ: Հանդիսավոր նիստի ավարտին ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով՝ Հայաստանի Հանրապետության դատախազության մի շարք դատախազների եւ դատախազության աշխատակիցների հայտարարվել է շնորհակալություն, վերջիններս պարգեւատրվել են հուշանվեր ժամացույցով, «ՀՀ դատախազության 105-ամյակ» հոբելյանական մեդալով, «ՀՀ դատախազություն» կրծքանշանով, դրամական պարգեւով:

Հիշեցնենք, որ Երանոսյանը մեղավոր է ճանաչվել իշխանությունը չարաշահելու հոդվածով, 4 տարվա ազատազրկման դատապարտվեց, սակայն ազատվեց պատժի կրումից՝ համաներման ու վաղեմության ժամկետի հիմքով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 24-ից 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 83 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵՐՈՍԻՆ ԱԶԱՏԵԼ ԵՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՎՃԱՐՆԵՐԻՑ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկանում ենք, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը համայնքի ավագանուն հայտնել է, որ իրեն է դիմել Դիլիջան քաղաքի բնակիչ Ռուբեն Ռազմիկի Սանամյանը, սեփականության իրավունքով իրեն պատկանող BMW մակնիշի (95 SR 005 պետհամարանիշի) ավտոմեքենայի, սեփականության իրավունքով իր ընտանիքին պատկանող Շամախյան 1 հասցեում գտնվող բնակելի տան անշարժ գույքի հարկի 2023-2024 թթ. պարտավորությունների մասով արտոնություն սահմանելու խնդրանքով, ինչպես նաեւ համայնքի ղեկավարին է դիմել ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Ռուբեն Մարատի Հակոբյանը, Ավագ Ռուսլանի Բալինյանի անվամբ հաշվառված MERSEDES-BENZ 500 SEL մակնիշի փոխադրամիջոցի 2016-2024 թթ. առաջացած պարտավորությունների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Դիլիջան համայնքի ավագանին հունիսի 26-ի նիստում որոշել է Ռուբեն Ռազմիկի Սանամյանի եւ Ավագ Ռուսլանի Բալինյանի փոխադրամիջոցի գույքահարկի եւ անշարժ գույքի հարկի պարտավորությունների նկատմամբ սահմանել արտոնություն: Ըստ այդ որոշման հավելվածի՝ Ռուբեն Սանամյանը ազատվել է իր ավտոմեքենայի համար 75 150 ապառքը, 10 504 դրամ, տույժը,իր անշարժ գույքի 31 448 դրամ ապառքը, 3310 դրամ տույժը վճարելու պարտավորությունից: Փաստաբան Ռուբեն Հակոբյանն էլ ազատվել է Ավագ Բալինյանի անվամբ հաշվառված ավտոմեքենայի 1 457 500 դրամ ապառքը եւ 405 644 տույժը վճարելու պարտավորությունից: Ռուբեն Սանամյանը մասնակցել է 2020 թվականի հուլիսի տավուշյան մարտերին: Այդ մարտերում ցուցաբերած ռազմական կարեւոր դերի համար կապիտան Սանամյանին վարչապետ Նիկոլ Փաշինյանի միջնորդությամբ նախագահ Արմեն Սարգսյանը շնորհել է Հայաստանի Ազգային հերոսի կոչում եւ պարգեւատրել Հայրենիքի շքանշանով:

ՎԱՌԵԼԱՓԱՅՏԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Ամեն տարի Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի յուրաքանչյուր ընտանիքի 8 խորանարդ մետր անտառի թափուկի ինքնապատրաստման թույլտվություն էր տրվում: Սահմանագոտու բնակիչները մեր թղթակցին բողոքել են,որ այժմ Տավուշի մարզի համայնքների մի մասում բնակիչներին թափուկ վառելափայտից օգտվելու թույլտվություն չի տրվել, մի մասում էլ նման հնարավորություն տրվել է միայն ընտանեկան նպաստառու ընտանիքներին: Սա բերելու է անտառաշատ Տավուշում վառելափայտի շուկայական գնի բարձրացմանը, որովհետեւ մարզի բնակիչները ձմռանն իրենց տները ջեռուցում են վառելափայտով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉ ՑՈՒՅՑԱՆԻՇՆԵՐ ԵՆ ԱՌԿԱ

ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե անշարժ գույքի նկատմամբ ինչ գործարքներ են իրականացվել ըստ գույքի տեսակների:

2023 թվականի հունիս ամսին բազմաբնակարան շենքի բնակարանի առքուվաճառքի 1193 գործարք եղել, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 1027 գործարք, նույն թվականի հունիս ամսին՝ 1161 գործարք:

Բնակելի տան առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիսին իրականացել է 674 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 635 անգամ, նույն տարվա հունիս ամսին՝ 629 անգամ:

Արտադրական նշանակության շինության գործարք 2023 թվականի հունիսին իրականացել է 72 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 47 անգամ, նույն ամսվա հունիս ամսին՝ 45 անգամ:

Հասարակական նշանակության շինության գործարք 2023 թվականի հունիսին իրականացել է 189 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 159 անգամ, նույն թվականի հունիս ամսին՝ 190 անգամ:

Ավտոտնակի առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիս ամսին կատարվել է 221 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 421 անգամ, նույն տարվա հունիս ամսին՝ 347 անգամ:

Հողի առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիս ամսին կատարվել է 2149 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 2463 անգամ: Նույն թվականի հունիս ամսին գործարքներ կատարվել են 2182 անգամ:

Գյուղատնտեսական նշանակության հողի առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիս ամսին կատարվել է 1099 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 1101 անգամ, նույն թվականի հունիս ամսին՝ 884 անգամ:

Այս վիճակագրությունից ակնհայտ է, որ 2024 թվականի մայիս ամսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն ավելի շատ են եղել, քան նույն թվականի հունիս ամսին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

UWC. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԲԱՎ Է ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

«Մենք սովորաբար դեպի ներս ենք նայում՝ մտածելով՝ ամեն ինչ հայության համար, բայց եթե մի քիչ ավելի հեռատես լինենք, ապա կնկատենք, որ Ռուբեն Վարդանյանի երազանքը՝ լինի UWC Դիլիջանը, «Ավորան» կամ «Տաթեւեր» ճոպանուղին, բոլորն էլ հեռու նայելով ու գյուղերը զարգացնելու նպատակով են արվում, բայց ուրիշ մեթոդով»: Այս մասին ասել է UWC Դիլիջանի խորհրդի անդամ, կրթական հարցերով միջազգային խորհրդատու, ամերիկյան մի շարք բուհերի խորհուրդների անդամ Ալիս Պետրոսյանը՝ UWC Դիլիջան միջազգային դպրոցի տասնամյակի առիթով:

Նա պատմել է, որ սկզբում Հայաստանում, Դիլիջանում UWC ցանցի քոլեջ ունենալու գաղափարն իր մոտ տարակուսանք է առաջացրել. «Երբ ամեն անգամ գնում էինք Դիլիջանի գյուղերը՝ դպրոցները նորոգելու կամ ուսուցիչներին օգնելու, տեսնում էինք ոչ բարվոք վիճակ, հետո՝ մի հրաշալի շենք՝ UWC Դիլիջանի շենքը, որը նախատեսված էր միջազգային ուսանողների համար: Հիմա ես ընդունում եմ իմ կարճատեսությունը: Ես չէի հասկանում, թե ինչքան հեռատես էին Ռուբեն Վարդանյանն ու Վերոնիկա Ջոնաբենդը, ովքեր մտածում էին, որ միայն հայերը չէ, որ պիտի Հայաստանում սովորեն, այլ բոլոր ազգերին պիտի բերես երկիրդ, ծանոթացնես քո երկրի պատմությանը, երաժշտությանը, դրանից հետո նրանց դարձնես քո խոսնակը, քո ամենակարեւոր ընկերը մինչեւ կյանքի վերջ»:

Նա նշում է, որ Ռուբեն Վարդանյանի եւ Վերոնիկա Ջոնաբենդի երազանքն էր աշխարհում խաղաղություն քարոզելը, եւ դա տեսանելի է, երբ մտնում ես Դիլիջանի միջազգային դպրոց, որտեղ ավելի քան 90 երկրից երիտասարդներ են սովորում:

ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Իր տեսակի մեջ ամենախոշոր նոր հետազոտության համաձայն՝ աշխարհում յուրաքանչյուր երրորդ երեխայի եւ դեռահասի մոտ մեկից ավելին ունի կարճատեսություն:

Փորձագետները չգիտեն, թե ինչու է դա տեղի ունենում, սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխաները, ովքեր երկար ժամանակ օգտագործում են համակարգիչներ կամ սմարթֆոններ, ավելի մեծ վտանգի տակ են:

Կարճատեսության տարածվածության ամենավերջին գլոբալ հետազոտությունն անցկացվել է 2015թ-ին: Ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու եւ առողջապահական քաղաքականությանը եւ կանխարգելիչ միջոցառումներին տեղեկացնելու համար գիտնականները գնահատել են կարճատեսության ներկայիս եւ ապագա տարածվածությունը մինչեւ 2050 թվականը՝ հինգից մինչեւ 19 տարեկան մարդկանց շրջանում:

Մինչ օրս ամենաընդգրկուն գլոբալ վերլուծությունը ցույց է տալիս կարճատեսության կտրուկ աճ վերջին 30 տարիների ընթացքում, ընդ որում ակնկալվում է, որ մինչեւ 2050 թվականը երեխաների եւ դեռահասների շրջանում կարճատեսության դեպքերի թիվը կհասնի 740 միլիոնի:

Ըստ British Journal of Ophthalmology-ում հրապարակված վերլուծության, քաղաքային բնակավայրերում ապրող աղջիկներն ու երեխաները կամ դեռահասները մոտ ավելի հավանական է, որ զարգանա այս վիճակը:

Գուանչժոուի Սուն Յաթ-սեն համալսարանի գիտնականների կարծիքով, կարճատեսությունը սովորաբար սկսվում է վաղ մանկությունից եւ տարիքի հետ ավելի է վատանում:

Վերջին աշխատանքում օգտագործվել են բոլոր համապատասխան հետազոտությունները եւ կառավարության հաշվետվությունները, որոնք հրապարակվել են մինչեւ 2023 թվականի հունիսը: Ընդհանուր առմամբ 276 ուսումնասիրություն է ներառվել վերանայման մեջ, որոնք ներառում են ավելի քան հինգ միլիոն երեխաներ եւ դեռահասներ եւ կարճատեսության գրեթե 2 միլիոն դեպք Եվրոպայի, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի եւ Օվկիանիայի 50 երկրներից:

Այնուհետեւ բոլոր ուսումնասիրությունների տվյալները համախմբվել են՝ հաշվի առնելով աշխարհագրական եւ այլ փոփոխականները:

Վերլուծությունը ցույց է տվել տարածվածության աճ 1990-2000 թվականներին 24%-ից մինչեւ 25% 2001-10 թվականներին, որին հաջորդել են ավելի կտրուկ աճերը՝ մինչեւ 30% 2011-19 թվականներին եւ 36% 2020-23 թվականներին:

Ելնելով այս տվյալների եւ միտումներից մինչեւ 2023 թվականը, մինչեւ 2050 թվականը կարճատեսության համաշխարհային տարածվածությունը կկազմի մոտ 40%՝ գերազանցելով 740 միլիոն դեպքը՝ 2030 թվականի 600 միլիոնի դիմաց, կարծում են հետազոտողները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 3 մարդ զոհվել է, 8-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 5-ը Հայաստանի Հանրապետությունում կկայանա «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» տնտեսական ծրագիրը:

Ծրագիրը հանդիսանում է տնտեսական զարգացման, նորարարության եւ ձեռնարկատիրական կարեւորագույն միջոցառում, որին մասնակցում են Ամերիկյան պետությունների կազմակերպության անդամ եւ դիտորդ երկրները:

Ծրագիրը պատվիրակներին եզակի հնարավորություն կընձեռի տեղում ծանոթանալու տարբեր նախագծերի, ռազմավարական ներդրումների եւ պետական-մասնավոր գործընկերության ոլորտներին, որոնք խթանում են տնտեսական աճն ու նորարարությունը Հայաստանում եւ Ամերիկյան պետություններում:

Հայաստանը, որպես հյուրընկալող երկիր, կներկայացնի իր կենսունակ նորարարական էկոհամակարգը, տեխնոլոգիական առաջընթացը, գյուղատնտեսական արդի համակարգերը եւ մշակութային ժառանգությունը համաշխարհային լսարանին: Ծրագիրը կընդգծի Հայաստանի դերը՝ որպես տարածաշրջանում տեխնոլոգիաների, ստեղծարարության եւ ձեռներեցության կենտրոնի:

ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ

Կառավարության երեկվա նիստում հաստատվեց 2025 թվականի պետբյուջեի նախագիծը, որի եկամուտները նախատեսվում են 2 տրլն 873.1 մլրդ դրամ, որից հարկային եկամուտները՝ 2 տրլն 759.9 մլրդ դրամ:

Բյուջեի ծախսերը 2025թ. նախատեսվում են 3 տրլն 482.4 մլրդ դրամ, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 2 տրլն 749.2 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերի գծով՝ 733.2 մլրդ դրամ, ըստ որում, կապիտալ ծախսերը նախատեսվում են զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական եւ անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար:

Բյուջեի պակասորդը նախատեսվում է 609.4 մլրդ դրամ:

«2025 թվականի բյուջեով կանխատեսվում է 5,6 տոկոս տնտեսական աճ, ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 3,5 տոկոս, միջին գնաճը՝ 3,5 տոկոս»,-ասել է ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ԳԱԶ ԳՆԵԼՈՒ ՇՈՒՐՋ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը չի բացառում Ադրբեջանից գազ ներկրելու շուրջ քննարկումները: Նրա կարծիքով՝ երրորդ մատակարարից գազ գնելու հնարավորությունը մեծացնում է էներգետիկ անկախության ու անվտանգության մակարդակը:

«Եթե մենք ժամանակին գազ գնում էինք միայն Ռուսաստանից, հետո սկսեցինք գնել նաեւ Իրանից, երրորդ մատակարարից գազ գնելու հնարավորությունը մեծացնում է էներգետիկ անկախության ու անվտանգության մակարդակը»,-նշել է Բաբկեն Թունյանը:

ՀՈՒՇԱԳԻՐ 9

ԿԿԱՅԱՆԱ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Հայաստանի առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) եւ Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնը (CSIE) փոխըմբռնման հուշագիր (MoU) ստորագրեցին, համաձայն որի 2024 թվականի Նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի՝ WCIT2024/DigiTec-ի օրերին, կկազմակերպվի «Նորարարություններն ինքնավար համակարգերում» թեմայով աշխատաժողով: Վերջինս համախմբելու է առաջատար փորձագետների, հետազոտողների եւ ոլորտի մասնագետների աշխարհի տարբեր երկրներից՝ համագործակցության եւ մտքերի փոխանակման հնարավորություն ստեղծելով:

ԱՏՁՄ գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը եւ Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնի տնօրեն Ռաֆֆի Պաղճեանը ստորագրեցին հուշագիրը եւ նշեցին համատեղ ջանքերի մասին, որոնք նպատակ ունեն ապահովելու ոլորտի միջազգային փորձագիտական համայնքի ներգրավվածությունը:

«Ուզում եմ շնորհակալություն հայտնել WCIT-ին այս բացառիկ հնարավորության համար: 2021 թվականին, երբ հիմնադրում էինք Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնը, մեր նպատակն էր Հայաստանը դարձնել ինքնավար համակարգերի առաջատար կենտրոն: Այսօր, WCIT-ի աջակցությամբ, նախաձեռնել ենք «Նորարարություններն ինքնավար համակարգերում» թեմայով աշխատաժողովը, որի շրջանակներում Հայաստանում կհյուրընկալենք ոլորտի առաջատար գիտնականների եւ մասնագետների աշխարհի տարբեր երկրներից: Նրանք կգան Հայաստան ոչ միայն աշխատաժողովին մասնակցելու, այլեւ հայաստանյան SS ոլորտը ուսումնասիրելու եւ նոր կապեր հաստատելու համար», - ասաց Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնի տնօրեն Ռաֆֆի Պաղճեանը:

«Նորարարություններն ինքնավար համակարգերում» թեմայով աշխատաժողովը, որը տեղի կունենա հոկտեմբերի 6-ին Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, կանդրադառնա ստորջրյա, օդային եւ ցամաքային ռոբոտատեխնիկայի նորամուծություններին, դրանց կիրառման ոլորտներին եւ ապագա հեռանկարներին: Մասնակիցները միջազգային փորձագետների հետ կքննարկեն ռոբոտների ինքնավարության մակարդակի բարձրացման տեխնոլոգիական լուծումները, մարտահրավերները, այդ համակարգերի ինտեգրումը տարբեր արդյունաբերական ոլորտներում:

Աշխատաժողովը հնարավորություն կտա ոչ միայն ոլորտի ներկայիս լուծումներն ուսումնասիրել, այլեւ ապագա տեխնոլոգիական զարգացումների համար նորարար մոտեցումներ մշակել:

Աշխատաժողովի խոսնակներից են Նահիրա Հովակիմյանը, ԱՄՆ Իլինոյսի համալսարանի Մեխանիկական գիտությունների եւ ճարտարագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, Գրեգորի Չիրիկջյանը, ԱՄՆ Դելավերի համալսարանի Մեխանիկական ինժեներիայի ամբիոնի ղեկավար, Էրիկ Ֆերոնը, Սաուդյան Արաբիայի Աբդուլլահ թագավորի անվան գիտության եւ տեխնոլոգիայի համալսարանի (KAUST) պրոֆեսոր, եւ այլ նշանավոր մասնագետներ:

«WCIT2024/DigiTec-ի օրերին մենք պարբերաբար կխոսենք գիտության մասին եւ նպատակ ունենք ոլորտի լավագույն գիտնականներին հրավիրել Հայաստան: Մենք հավատում ենք, որ համաշխարհային մարտահրավերների լուծումը տրվելու է գիտության միջոցով: Ինչպես պատմությունն է ցույց տալիս, բոլոր համաշխարհային պատերազմներն ու արհավիրքները կանգ են առել գիտական նորամուծությունների շնորհիվ: Շատ ուրախ ենք այս համագործակցության համար եւ շնորհակալ ենք Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնին այս նախաձեռնության համար»,-ասաց Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը:

WCIT2024/DigiTec-ը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 4-7-ին Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ «ՄՏՔԻ ՈՒԺԸ. Արհեստական բանականություն՝ սահմաններից այն կողմ՝ էթիկայի շրջանակներում» խորագրով:

WCIT2024/DigiTec-ը, անցկացման չորս օրերին, Հայաստանը կվերածի տեխնոլոգիական մտքի կենտրոնի՝ հանդիսանալով հարթակ ոլորտի եւ թեմայի շուրջ առաջատար համաշխարհային խոսնակների ելույթների, պանելային քննարկումների եւ B2B հանդիպումների համար: Համաժողովի շրջանակներում կանցկացվի նաեւ WITSA World Cup ստարտափների մրցույթը շուրջ 20 երկրներից ընտրված ստարտափների շրջանում, կներկայացվեն նորարարական ցուցադրություններ, բիզնես ներկայացումներ, սեմինարներ եւ այլ միջոցառումներ:

ԸՆԹԱՑԻԿ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Պետական եկամուտների կոմիտեում «Կանտուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնվել է արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձի օրինապահության հավաստագիր:

Կոմիտեն, ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ, օրինապահության հավաստագրի տրամադրման միջոցով հավաստում է տնտեսական գործունեություն իրականացնող անձանց օրինապահությունը, որոնց կողմից տեղափոխվող ապրանքների նկատմամբ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառման անհրաժեշտություն չի առաջանում:

Օրինապահության հավաստագիր ստացած տնտեսական գործունեություն իրականացնող անձինք հնարավորություն ունեն օգտվելու Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման արագացված եւ պարզեցված ընթացակարգերից:

Կոմիտեն տեղեկացնում է, որ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձի օրինապահության հավաստագիրը տրամադրվում է ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի թիվ 797-Ն որոշմամբ սահմանված կարգով: Անհրաժեշտ է, որ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձինք համապատասխանեն կարգով սահմանված օրինապահության չափանիշներին:

UBPay ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԻԱՑԵԼ Է IAMTN ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ

UBPay դրամական փոխանցումների հայաստանյան վճարահաշվարկային համակարգը դարձել է Դրամական փոխանցումների ցանցերի միջազգային ասոցիացիայի՝ IAMTN-ի անդամ:

IAMTN-ը միավորում է բանկերին, վճարային համակարգերին, էլեկտրոնային փողի կազմակերպություններին եւ բջջային օպերատորներին: Ասոցիացիան ակտիվորեն համագործակցում է կառավարությունների, վերահսկող մարմինների, ասոցիացիաների եւ մասնավոր ընկերությունների հետ՝ ավելի անվտանգ, հուսալի, արագ, մատչելի եւ թափանցիկ ձեւով միջազգային փոխանցումների եւ վճարումների իրականացման գործընթացին աջակցելու համար:

UBPay-ը ապահով եւ արագ դրամական փոխանցումների հարթակ է Հայաստանում եւ ամբողջ աշխարհում բանկերի եւ վճարային կազմակերպությունների համար: UBPay-ի օպերատոր եւ հաշվարկային բանկը Հայաստանի առաջատար բանկերից մեկն է՝ «Յունիբանկը»:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«ՄՈՒՍԱՀԱ» ՍՊԸ-ն մտադիր է դիմել հանրային ծառայությունը կարգավորող հանձնաժողով՝ ընկերությանը պատկանող «Ախուրյան» ՓՀԷԿ-2-ից ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի Ջրաձոր բնակավայր առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 23,476 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ):

Հեռ. (+374 94) 91 57 52

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ շրջկենտրոն Ախուրյան

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԵՐԳ՝ ՓԱՐԻԶՈՒՄ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը սեպտեմբերի 28-ին եւ 29-ին երկու բացառիկ համերգով ելույթ կունենա Փարիզում՝ ներկայացնելով հայ եւ ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Առաջին համերգը տեղի կունենա սեպտեմբերի 28-ին՝ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ եւ անվանի դաշնակահարներ Լուի Լորթիի ու Էլեն Մեղսիեի մասնակցությամբ: Ծրագրում ներկայացված են Կլոդ Դեբյուսիի, Ֆրանսիս Պուլենկի եւ Էդվարդ Միրզոյանի ստեղծագործությունները: Սեպտեմբերի 28-ի համերգային ծրագիրը կարող եք գտնել այստեղ: Համերգի գլխավոր գործընկերն է AKNEYE-ը:

Հյուրախաղերի երկրորդ օրը՝ սեպտեմբերի 29-ին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ Փարիզի ֆիլհարմոնիայի «Սիտե դե լա մյուզիք» համերգասրահում հանդես կգա դեբյուտային համերգով, որի տոմսերն արդեն սպառված են: Համերգային ծրագրում Խաչատրյանի ամենահայտնի ստեղծագործություններն են: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ կունենա ֆրանսահայ թավջութակահար Աստղիկ Սիրանոսյանը:

Համերգի աջակիցներն են Ֆրանսիայում ՀՀ դեսպանությունը, ՀԲԸՄ Ֆրանսիան եւ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ստեղծվել է երաժշտության ուժով հոգեւոր վերելքի ձգտման եւ հայ երաժշտական ավանդույթների պահպանման նպատակների շուրջ միավորված մի խումբ դասական երաժշտության նվիրյալների ուժերով: Իր հստակ ու նրբագեղ հնչողությամբ, ինչպես նաեւ ազդեցիկ կատարողական ոճով ճանաչված նվագախումբը սպասված հյուր է ինչպես Հայաստանի, այնպես էլ աշխարհի առաջատար համերգասրահներում: Հայաստանում եւ արտերկրում անցկացվող տարեկան ավելի քան 50 համերգների հարուստ երկացանկերը ներառում են տարբեր ժանրերի եւ կատարողական ձեւաչափերի համերգներ՝ սիմֆոնիկ, բալետային ու օպերային երաժշտությունից մինչեւ հանրամատչելի կինեմատոգրաֆիական երաժշտության սիմֆոնիկ փոխադրումներ եւ դասական գործերի ջազային մեկնաբանություններ:

Նվագախումբն իր հիմնադիր, գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի հետ ստեղծել է չորս ամենամյա փառատոն, որոնց շրջանակում Հայաստան են հրավիրվել աշխարհի բազմաթիվ վիրտուոզ մենակատարների եւ դիրիժորների: Նվագախումբը նաեւ համագործակցում է ժամանակակից մի շարք անվանի կոմպոզիտորների հետ:

Դասական երաժշտության եւ արդի տեխնոլոգիաների երկխոսության հանդեպ հավատի շնորհիվ նվագախումբն աչքի է ընկնում նորարար նախաձեռնություններով՝ իր գեղարվեստական նպատակների համար համարձակ փորձերով կիրառելով արհեստական բանականության եւ թվային տեխնոլոգիաների հնարավորությունները: Տարեցտարի ընդլայնվում է նաեւ նվագախմբի դերը Հայաստանում երիտասարդների մշակութային կրթության ուղղությամբ: Դպրոցականների եւ ուսանողների համար անցկացվող կրթական ծրագրերով նվագախումբը փորձում է պատանիների շրջանում արթնացնել հետաքրքրություն եւ համակրանք դասական երաժշտության հանդեպ՝ նրանց հղկելով որպես դասական համերգի ունկնդիրներ:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՈԱՆ» ՏԵՂԱԴՐԵԼ Է ՀԵՏՀԱՇՎԱՐԿԻ ՎԱՀԱՆԱԿԸ

Երեւանի կենտրոնում՝ Հյուսիսային պողոտայում, տեղադրվել է «Նոայի»՝ Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլի մեկնարկային խաղի հետհաշվարկի վահանակը: Հետհաշվարկի մեկնարկը տվել է երեւանյան թիմի գլխավոր մարզիչ Ռուի Մոտան: Միջոցառմանը ներկա են եղել թիմի ֆուտբոլիստները, երկրպագուները:

Վահանակի վրա տեղադրված է tickets.noahfc.am կայքի հասցեն եւ QR կոդեր՝ «Մլադա Բոլեսլավի» հետ կայանալիք խաղի տոմսեր ձեռք բերելու համար:

Հիշեցնենք, որ Կոնֆերենցիաների լիգայի առաջին տուրի «Նոա»- «Մլադա Բոլեսլավ» խաղը կկայանա հոկտեմբերի 3-ին՝ Երեւան Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում:

«Նոան» Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլ դուրս եկավ սահմանելով մի շարք ռեկորդներ: Երեւանյան թիմը եվրոպական 50 թիմերից միակն էր, որը պայքարը սկսելով որակավորման առաջին փուլից՝ հաղթահարեց 4 փուլ:

«Նոան» նաեւ ընթացիկ մրցաշրջանի որակավորման փուլերի ամենախոշոր հաշվով հաղթանակը տարավ՝ 7:0 հաշվով հաղթելով Մալթայի «Սլիմա Ուոնդերերսին»:

Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլում հոկտեմբերի 24-ին երեւանյան թիմը կհյուրընկալվի ավստրիական «Ռապիդին», իսկ նոյեմբերի 7-ին՝ Լոնդոնի «Չելսիին»: Նոյեմբերի 4-ին «Նոան» կընդունի Ռեյկյավիկի «Վիկինգուրին», դեկտեմբերի 12-ին՝ Կիպրոսի ԱՊՕԵԼ-ին, իսկ Լիգայի փուլի վերջին խաղում դեկտեմբերի 19-ին կհյուրընկալվի սերբական «Բաչկա Տապոլային»:

ՀԱՂԹԱՆԱԿ

Պրոֆեսիոնալ թենիսիստ Էլինա Ավանեսյանը հաղթանակով է մեկնարկել Պեկինի Մաստերս մրցաշարում:

Պեկինի Մաստերս մրցաշարի մեկնարկում Հայաստանը ներկայացնող Էլինա Ավանեսյանը հաղթանակ տոնեց: Կանանց մենախաղի անդրանիկ տուրում Ավանեսյանը մրցեց ԱՄՆ ներկայացուցիչ Էմինա Բեկտասի հետ: Մոտ 1,5 ժամ ձգված մրցախաղում Ավանեսյանը հաղթեց երկու սեթում՝ 6:2, 7:5 հաշվով:

Էլինա Ավանեսյանի հաջորդ մրցակիցը Պեկինի այս մրցաշարում Էլենա Օստապենկոն է:

«ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ ՌՊԼ-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻՑ Է»

«Կրասնոդարի» պաշտպան Ջովանի Գոնսալեսը հայտարարել է, որ թիմի ավագ, կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը կարող է խաղալ ավելի ուժեղ առաջնությունում, քան ռուսականն է: «Այո, անկասկած, Սպերցյանն ունի բարձր մակարդակ՝ ավելի ուժեղ առաջնությունում խաղալու համար: Էդուարդը ոչ միայն «Կրասնոդարի», այլ Ռուսաստանի Պրեմիեր լիգայի լավագույն ֆուտբոլիստներից մեկն է: Նա կարող է կարիերայում լավ թռիչք կատարել»,- Գոնսալեսի խոսքերն է մեջբերում «Սովետսկիյ սպորտ»-ը:

ԼՈՒՐԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն երեկ ընդունել է Լիոնի մետրոպոլիայի Դեսին-Շարպիոյի քաղաքապետ Լորանս Ֆոթրայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, Դեսին-Շարպիոյի փոխքաղաքապետ Դենիս Ջորկաեֆը եւ այլք:

ԿԳՄՍ նախարարը ողջունել է հյուրերին եւ ընդգծել կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում Ֆրանսիայի հետ տարիներ ի վեր ձեւավորված արդյունավետ համագործակցությունը:

«Մեծապես գնահատում ենք այն աջակցությունը, որ շարունակաբար զգում ենք բոլոր կարեւոր նախաձեռնություններում»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի ընդգծմամբ՝ ակտիվ համագործակցությունն ու միասին գրանցած հաջողությունները նաեւ նոր ծրագրերի մեկնարկ կարող են դառնալ:

Դեսին-Շարպիոյի քաղաքապետ Լորանս Ֆոթրան շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ կարեւորել Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունները: Այս համատեքստում նա բարձր է գնահատել Դեսին-Շարպիոյի հայ համայնքի դերակատարությունն ու կարեւոր նեդրումը քաղաքի զարգացման գործում:

Լորանս Ֆոթրան տեղեկացրել է՝ Հայաստան են ժամանել, մասնավորապես, Ստեփանավան այցի եւ այդ քաղաքի հետ կրթության, մշակույթի եւ այլ ուղղություններով փոխգործակցության հնարավորությունները քննարկելու նպատակով:

Ստեփանավանն ու Լիոնը երկար տարիներ քույր քաղաքների կարգավիճակ ունեն: Դեսինի քաղաքապետը տեղեկացրել է նաեւ, որ 2025 թվականի մարտին Դեսինում մի շարք միջոցառումներ են կազմակերպվելու՝ նվիրված հայ համայնքի ձեւավորման 100-ամյակին:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ 155-ԱՄՅԱԿԸ

Երեկ մեծանուն կոմպոզիտոր, երաժշտագետ, բանահավաք եւ ուսուցիչ Կոմիտաս Վարդապետի (Սողոմոն Սողոմոնյան, 1869-1935) ծննդյան 155-ամյակն էր:

«Ծնուել եմ 1869-ի Սեպտեմբեր 26-ին Փոքր Ասիայի Քիւթահիա քաղաքում: Հայրս էր Քիւթահիացի Գէորգ Սողոմոնեանը, իսկ մայրս Բրուսացի Թագուհի Յովհաննիսեան:

Ինձ մկրտել են ծնունդիցս երեք օր յետոյ եւ անունս դրել Սողոմոն:

Մանկութիւնից զրկուեցայ ծնօղներիցս: Մայրս մեռել է 1870-ին Մարտի 15-ին, իսկ հայրս 1879 Մայիս 17-ին: Ծնօղներիս մահից յետոյ ինձ պահել դաստիարակել է հօրական տատս՝ Մարիամը: Սա եղել է ինձ համար երկրորդ մայր եւ իմ ապագայի մասին լուրջ հոգ տանող:

Քոյր եւ եղբայր չեմ ունեցել, այլ մնացել եմ միամօր զաւակ»: Կոմիտաս Վարդապետ. «Ինքնակենսագրութիւն»:

Կոմիտասը 1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալված եւ Չանկըրը աքսորված հայ մտավորականների թվում էր: Ազդեցիկ գործիչների միջամտությամբ նրան վերադարձրին Կոստանդնուպոլիս: Այնուամենայնիվ, աքսորի աղետը Կոմիտասին ծանր հոգեբանական տառապանք պատճառեց, ինչը հանգեցրեց հետտրավմատիկ սթրեսային խանգարման (PTSD): Կոմիտասն իր կյանքի մնացած հատվածն ապրել է Կ. Պոլսի եւ Փարիզի հոգեբուժական կլինիկաներում: Վախճանվել է 1935 թ. հոկտեմբերի 22-ին՝ Փարիզի Վիլժյուիֆ հոգեբուժական հիվանդանոցում: 1936 թ. նրա աճյունը տեղափոխվեց Հայաստանի Երեւան քաղաքի հայ մշակութային գործիչների պանթեում, որը հետագայում կոչվեց Կոմիտասի անունով:

● Հոկտեմբերի 28-ին՝ ժամը 12:00-ին, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կցուցադրվի «Մոխրոտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչն է հիմք հանդիսանում հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելու համար:

Լիլիթ Մկրտչյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելիս հիմք է ընդունվում ամբուլատոր քարտում առկա ախտորոշումը կամ հիվանդանոցային կազմակերպության կողմից տրված հիվանդության պատմությունից գրված քաղվածքը (էպիկրիզը):

Ելնելով հիվանդությունից, եթե հիվանդին բժշկի ցուցումով նշանակվել է հիմնական դեղերի ցանկում չընդգրկված դեղ, ապա ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի եզրակացության հիման վրա հիվանդին դուրս է գրվում դեղ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հուլիսի 7-ի N 11-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստրի)» ցանկից:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի դեղատոմսերը դուրս են գրվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դեղատոմսային ձեւաթղթերը հաստատելու մասին» N 759 որոշման եւ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղատոմսի դուրսգրման եւ դեղերի բաց թողնման կարգի» N 100 հրամանի պահանջներին համապատասխան:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Աշոտ Ալավերդյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝ մարտի 3-ից սկսած՝ տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այսօր լրանում է Արցախյան քառօրյա պատերազմի 4 տարին եւ միեւնույն ժամանակ 1 տարին, ինչ Արցախն ամբողջովին հայաթափվեց: «Ժողովուրդ օրաթերթը գտել է լուսանկար՝ ինչպես էին մեկ տարի առաջ մարդիկ, իրենց տունը լքելուց առաջ, կոտրում տան սպասքը եւ այլ իրեր, որոնք տարիներով հավաքել էին, սակայն իրենց հետ բերելու հնարավորություն չունեին:

Այս կտորտանքների հետ մարդիկ ասես բեկորների են վերածել իրենց ապրած տարիները նաեւ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+3 + 8 +18 + 23
Կոտայքի լեռներ	+4 + 7 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
Գեղարքունիք	+4 + 8 +17 + 20
Լոռի	+6 + 10 +18 + 21
Տավուշ	+ 8 + 13 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +21 + 25

Արարատ	+ 13 + 15 +25 + 27
Արմավիր	+ 12 + 14 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+ 8 + 10 +17 + 19
Երեւան	+ 18 + 20 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*